

5306

Կապույտ  
Կարճ ԿԳ

Կարճ Կարճ

1828



2004



1299-64

ՊՏՂԱԼԻՑ

ՅՈՐԴՈՐԱԿ

Յնթեռնուէ և ՚ի գիտելէ զԱծա շուքն գիրս :

Ի ԿԱԼԿԱԹԱ

Տպարանի ՚ի Գործարանի Մարտիրոսեան և Գործարանի :

2000 Օրինակ :

Մարտի 1828 :

FIRST HOMILY

IN

Armenian


PRINTED BY THE ORDER AND AT THE EXPENSE OF THE CALCUTTA  
CORRESPONDING COMMITTEE OF THE PRAYER BOOK  
AND HOMILY SOCIETY.

Calcutta,

AT THE PRESS OF THE ARMENIAN PHILANTHROPIC ACADEMY.

2000 Copies.

April, 1828.



ԱՌ ԸՆԹԵՐՅՈՂՍՑ

Որ ճանգաճ խնդրեցէ շէնքանուր հոգեղ և փոքր և չէն-  
ստարու հոգւոյ՝ սուցի՝ է քեարանէ աստի ս'ւր և շիարտ Գրա-  
նէլ զայն : Առաջինոյ պաշտօնից յորտորակ անձերու-Բեան Թ  
առաջինն 'ի ճան-իցն' ( որ յԱնգղերէն ասի HOMILY, ասեալ  
'ի Յունականն Բառէն Օμιλία. ) զորս 'ի Տի հաստեղ չար-  
գել հրամայեաց Բարեյշխարակ զընտյն Անգղոյ Եղբա-  
բէլ երբ 'ի Տի Վե Վեշխարակներորտ շարուն 'ի պէս Գործ-  
ածա-Բեան Եւրոյ փոքրոտեաց : Չորս ճառ աստեղն սե-  
րով յան ճն աս-ի Բարգճմէլ 'ի Տե Բարեառ 'ի խնդրոյ Ժողո-  
վոյն Կրոյ սղօթից և Ճառ-ից, որպէս արդէն Բարգճմ-  
նեալ պարգրեցաւ յին 'ի Բարեառ Երայեցւոյ և Յունոյ  
և Արեւոցւոյ և Պարոնի և Հնչիւոյ և այլոյ ազգոյ :

Յ. Ա.



5306-ա/հ

(80088-ա/հ)

1435-87

ՊՏՂԱԼԻՅ ՅՈՐԻՈՐԱԿ

ՅԸՆԵՆՔՆԱԼ Ե՛ ՚Ի ԳԻՊԵԼ ՂԱԾՄՂՈՒՆԷԼ ԳԻՐՈՒ ։



Քիբ ինչ ապաքէն առն քրիստոնէի առաւել զ. ազգէսք սոսքէ  
 կենցաղօգուտ և պիտանի , քան թէ գի- Գրոց :  
 տութիւնս աստուածեղէն մատենից . քանզի  
 պարոճաակեալ կան ՚ի նոսին ճշմարիտ բանն  
 Աստուծոյ , հրաշագեղ սխաբ նորին և բռնամտակ  
 պարտականութիւն մարդոյ : Եւ արդարեւ զամենայն Աստուծոյ  
 ճշմարտութի և զվարդապետութիւն որ հարկաւոր Գրոց : Հարկա-  
 իցէ մերում արդարութե և յախտենական իրկութե՝ սոսքէ ԳԻՊԵԼ  
 հնար է առնուլ ընդունիլ յաճմիկ վտակէ և յաղ-  
 քերէն ճշմարտութե : Սին իրի որոց միանգամ ցան-  
 կալի իցէ երթալ զուղիղ և զանհրար ճանապարհ  
 ԱՅ , պարտին սրտի մտօք գուն ՚ի գործ դնել ճա-  
 նաչել և գիտել զգիրս ածեղէն մատենից . առանց  
 այսր երկնային ճանօթութեան անհնար է նոյս ըստ  
 բաւականին ճանաչել զԱԾ և զկամս նորա և կամ  
 գիտել զպաշտօն և զպարտականութիւն իւրեանց :  
 Եւ ոյ ախարթ է ճարակոյ ջուր և քաղցր է քաղ- Եւ ի ո՛րոց ԳԻՊԵԼ  
 ցելոյ հայ , այսպէս և ընթեռնուլ և լսել և քննել ետեւ տարթ գի  
 և վերձանել զսրբազան գիրս՝ ախարթ և քաղցր է սոսքէ ԳԻՊԵԼ ԳԻՐՈՒ :

Աստուծոյ  
 Գրոց : Հարկա-  
 սոսքէ ԳԻՊԵԼ  
 Գրոց :

Եւ ի ո՛րոց ԳԻՊԵԼ  
 ետեւ տարթ գի  
 սոսքէ ԳԻՊԵԼ ԳԻՐՈՒ :

Ս. է. ոչ. է. յ. է. է. շ. ի քիմս նոցա՝ որք կամիցին զԱճ Ըանաչել և զկամի  
 Ե. է. ոչ. է. յ. է. է. շ. նորա գիտել և զիւրեանց պարտականութիւն կատա-  
 րել: Եւ որք միանգամ պարանոցաթաղ անկեալ կան  
 յունայնութիւն աշխարհի, և զԱստուծոյ և զանձայնոյն  
 չունիցին ինչ փոյթ, այնպիսեաց ստամոքքն միայն  
 անախորժ և յախրայեալ երևին երկնային գիտութե  
 և կերակրոյ բանին Աստուծոյ. և տկարութիւն ստա-  
 մոքաց նոցա է միայն պատճառ սիրելոյ նոցա զաշ-  
 խարհային ունայնութիւնս, առաւել քան զերկնային

Յարմար նմանութեան որ յուսումնէ տեն և լմցեն՝ թէսլէտ և կերպին և լմցելին այն քաղցր  
 զո ոչ լինել որք իցեն ի քիմս այլոց իբրև զխորիսխ յապակածութե  
 ցոզ սուրբէ Գրոց: քմայ իւրեանց զգան զդառնութիւն օշորի. ոչ զի դառն  
 է կերակուրն կամ ջուրն, այլ զի դառնահամ են լե-  
 զոք և բերանք տենդուսայն. լս սին օրինակի քաղցր-  
 ութուն բանին Աստուծոյ ոչ է դառն որակաւ, այլ  
 դառնահամ է միայն ի քիմս նոցա՝ որոց միտք ապա-  
 կանեալ են երկար ունակութե մեղաց և սիրոյ այս  
 աշխարհի: Սմին իրի և մեր թողեալ լքեալ ի բայ  
 ձգեալ զապակածեալ միտս մարմնաբէր մարդոց՝ որոց  
 փոյթ միայն է զմարմնոցն հոգալ հաւատով և ակ-  
 նածութե լուսնոք և լնթերց ցոք զանձեղէն մատեանս

Յրբորոյն Գրո- որ է կերակուր հոգւոյ: Ի խնդիր լիցաք վտակին  
 Բաշտն ըզճեւ ըն- կենաց անդադար՝ որ կնքեալ պահի ճարտելոյ ի  
 Բեռնու- լե քննել գիրս հնոց և նորոց կտակարանաց. և մի խրեպոք  
 զոք Գրոց. հոգ. զանձինս ի տիրմ և ի ցելս աւանդութեց մարդկանս  
 Ե: ՍԷ Գրոցն է որոց երևակայութիւնն ետ այնոցիկ աւանդութեանց  
 Բարանան Վարդա- զտիպս. զի անսիրութեամբ մերով հասանիցեմք ի  
 Գրոց- լեան Վրոն նպատակ արդարութե և փրկութե: Ասան զի յան-  
 քննութե Գրոց: շունչ մատենի սմա պատուիրեալ է մեզ Աստուծոյ,  
 թէ զինչ պարտիմք առնել, յինչ իմքե պարտիմք  
 հրաժարիլ, զինչ հաւատալ և թէ զինչ ակն ունիցիմք  
 գրանել յԱստուծոյ ի վախճան ամենայնի: Ի Գրոց



Գործաշուք մատենից տեսանելիք զերեքսրբեանս անձու թիւն  
 'ի Հայր և յՄորի և 'ի սուրբ Հոգի • յորմէ ամենայն  
 ինչք ստեղծան և որոյ խնամովքն կեան ամ ստեղծ-  
 ածք • այս երից անձանց է մի անձու թիւն և մի է-  
 ու թիւն 'ի սրբազան գրոց աստի հնար է մեզ ճանաչել  
 զանձանց մերոց անարդու թիւն և զթշուառու թիւն և  
 զԱյ մերոյ մեծութիւն և զբարութի • որով զմեզ և զամ  
 արարածս իւր 'ի գոյ էաձ և իւրոց բարեբարութեանցն  
 արար բաժանորդ • Նա և 'ի գրոց աստի ուսանիմք ճա-  
 նաչել զկանս և զհաճութի Այ, ըստ որում անկ է մեզ  
 այժմուս ճանաչել զայն • Նա անհիկ մեծիմաստ և  
 անձազգեաց վարդապետն սբ Յովհանն Ասկեբեբան  
 ասէ • Թէ լիովին գրեալ կայ յանձնէն մատենան որ  
 ինչ միանգամ հարկաւոր է վերջութե հոգւոց մարդոց •  
 Որ կարօտ իցէ գիտութեան՝ ուսցի զգիտութիւն 'ի  
 սուրբ գրոց անտի • Խստասիրտքն և անզիղջքն 'ի մե-  
 ղայ գտցեն յԱստուածաշնչի անդ զտանջանս պատրաստ  
 տեալս նոցա յանձնին արդարութեանէ • առ 'ի անհ 'ի  
 սիրտս նոցա արկանել և զխստութի սրտիցն 'ի կակ-  
 ղութիւն փոխել • Տառապեալքն և նեղեալքն աշ-  
 խարհային թշուառութեք գտցեն զվշտաց իւրեանց  
 թեթեւութիւն 'ի խոստացեալ երանութիւնս յախ-  
 տենական կեցաց • և զհոգած սիրտս իւրեանց մխիթա-  
 ընով սիրտիցեան երկնային մխիթարութեք • Ախ-  
 ըստ որեալքն 'ի մահ յամենաշաք դիւնն յանձնչի անդ  
 զսպեղանիս բուժիչս գտցեն • և զխոցան 'ի միջոց 'ի բաց  
 բարձրեն • յորժամ պէտք իցեն զճշմարտութի ուսուցա-  
 նել կամ զմոլոր վարդապետութի ինչ ստգտանել կամ  
 զճորութիւն ինչ պարսաւել • զառաքինութիւն ինչ գո-  
 վել • զբարի խրատ ինչ տալ • մխիթարել զտրամեալս  
 կամ յորդորել զմոլորեալս 'ի բարին և կամ զայլ  
 առաքինութիս առաքինանալ 'ի վրիտի հոգւոց մերոց •  
 ըստ ասից սբոյ Ասկեբեբանին՝ զայս ամենայն հնար է

մեզ լիովին ուսանել ՚ի սրբատող Աճաշնչին : Եւ աւա-  
նիկ ըստ ասելոյ Փողգենտիոսի , յաճաշունչ մատեանս  
անդ շախուհասակաց գոյ բաւական կերակուր , և

ԱԲ զերբն Տար- կաթնկերաց գոյ բաւական կաթն : Ամբարեալ կան  
հարուրէ դէտար- յաճեղէն գանձարանի աստ ամբ բարիք պատշաճեալք  
հան Վարդապետ- ամենայն հասակաց և ամենայն վիճակաց և ամենայն  
դուրսի վրան ամ տեսակաց մարդկան : Սիւն իրի զայսոսիկ մատեանս  
զիճակաց եւ հո- առաւել պարտ է մեզ ունիլ ՚ի ձեռս մեր , առաջի  
սակաց :

Մար . 4 : ըստոյ մերոյ և մանաւանդ ՚ի տախտակս կրծոյ մերոյ :

Ղուկ . 3 : Այ զի սրբազան մատեանքն ԱՅ են երկնաբուղիս կերա-

Յովհ . 17 : կուր հոգւոյ մերոյ . ունկնդրուի աճաւանդ պատգամաց

Ստղ . 19 : և պահպանութիւն աճաւանդ օրինացն զմեզ երանեն և  
զմեզ սրբեն և զմեզ մաքրեն յերկրաւոր աշտոյ . բաննք  
աստուածաշունչ գրոյ ուղղիչ են հոգւոյ մերոյ .  
վառ ճրագք են սրտից մերոյ . սնեւիքայ և հաստատուն  
և մշտայոյս միջնորդ են մերոյ փրկութե . ՚ի սոյունոյ  
խոնարհքն և աղքատքն հոգւով գտանեն զխմաստուի .  
սոքա զխիղճ մտաց մերոյ մխիթարեն և ուրախ առնեն

Թեղի՞նչ շահ եւ սփոխեն և զուարթացուցանեն . առաւել արգոյ և  
օգուտ էրէ զե- գերազանց գանձ են սոքա քան զսոկի և քան զահանս  
դուրսի «Է գրոյ : պատուականս . առաւել քաղցր են քան զմեղր և քան

Ղուկ . 10 : զխորհիսխ մեղու . և ոչ այսչափ միայն այլ և Աճաշունչն  
է այն Բարի Տանձ զոր ընտրեաց Մարիամ . զի ունի  
յինքեան զյաւիտենական մխիթարութիւն : Չբանս  
աճաշունչ գրոյ արժան է կոչել բանք յաւիտենական  
կենաց . քանզի Աճաշունչն է միջնորդ ԱՅ կարգեալ  
՚ի պէտս փրկագործութեան մարդոյ : Խթան է սա  
մեղաւորաց յապաշխարուի խոստմամբք երանուէցն

Յովհ . 6 : ԱՅ . և բնակեալ յերկիւղած սրտի՛ բանն Աստուծոյ  
հանապազ զաճահաճոյ պտուղս տայ յամենայնի . կեն-  
դանի է սա և ազդօղ և հղօր զօրութ . և լն առաքե-

Երբ . 4 : լոյն Պարզութի՛ հաստատուն զամենայն սոքա երկնայրի . եւ ուն -

ցոնէ մէջն զորոշումն շնչոյ՝ և ոգւոյ՝ և յօրէց՝ և բազմոց։  
 Երնողի իմաստնոյ նմանեցոյց Քս զնա՝ որ զհոգի իւր Մատթ. 7 :  
 հաստատէ ՚ի վերայ բանից իւրոց և ՚ի վերայ ապա-  
 հով և հաստատուն հիման պատուիրանաց իւրոց :  
 Այսու բանիւ Աստուծոյ դատեսցէ զմեզ դատաւորն Յովհ. 12 :  
 ՚ի վերջոյ . վասն զի բունն զոք էո խօնեցոց , ասէ Քս ,  
 նա դարի զնա յուսուրն յեղնում : Որ պահէ զբանս Քի Յովհ. 14 :  
 սիրոյ և շնորհայն Աստուծոյ արժանանայ . և լինի  
 օթեան և տաճար ակնսօրհնեալ սրբոյ Երրորդուէն :  
 Որ միանգամ փոթաջան փափագանօք զբանն Աստու-  
 ծոյ ընթեռնու , և յիւրում սրտի զ ընթերցեալն պա-  
 հէ , հաստապիսոյ բետեա անցաւոր զանկութեան աշ-  
 խարհայնոց ՚ի բնոց ՚ի խորոց սրտի նր խլեալ հան-  
 ցի . և անանց սէրն երկնային երանութեց ( զոր Ած  
 խոստանայ արդարոց յԱծաչնչի անդ ) արմատայեալ  
 կալցէ զնորին տեղի : Եւ արդար և ոչինչ այնպէս ան-  
 շարժ պահէ զյոյս և զհաւատ մեր յԱծ , ոչինչ այն-  
 ոյէս ապահով առնէ զանմեղութիւն և զմտքութիւն  
 սրտի միանգամայն և զարտաքին անհասանելի վարս և  
 զկեանս մեր , որպէս անդադար ընթեռնուլ մեր զգիրս  
 անձեղէն մատենիցն , և զպատուիրանս Աստուծոյ տպա-  
 ւորելն ՚ի խորս սրտից մերոց : Քանզի որ ինչ խոր-  
 արմատ տպաւորի և քանդակի ՚ի տախտակս սրտի  
 անընդհատ ընթերցմամբ և փոթաջան վերձանութե  
 սուրբ գրոց , այն ամենայն ՚ի վերջոյ յերկրորդ բնութի  
 փոխարկի : Նա աւանդի սուրբ գրոց է զօրութեամբ և  
 ներգործութեամբ իւրեանց լուսաւորել զմիտս անգի-  
 տայ , և առաւել զճրագ մտաց նոցա պայծառացուցա-  
 նել որք հաւատով և անխոնջ ջանիւք ընթեռնուն  
 զայն . սուրբ գրոց է մտիթարել զսիրտս նց և խրա-  
 խուսել քաջալերել զնոսա ՚ի կատարումն ամենայն  
 պատուիրանացն Աստուծոյ : Սուրբ գիրքն ուսուցանէ 4 . Թիմո 4 . 14 :  
 զհամբերութիւն ՚ի ճակտորդութեան և զխոնարհութի Է . Սնոց . 20 :

. Կոր . 15 : Ի յաշողութեան . զուցանէ մեզ զպատշաճաւոր միւ-  
 ր . Յովհ . 5 : տիւ Աստուծոյ , և զպատշաճաւոր սէր և զողորմութի  
 առ դրացիս մեր : Սբ գիւրքն զողջամիտ խրատ տայ  
 մեզ յամենայն իրս տարակուսանայ . զուցանէ մեզ զա-  
 պաւհնն և զպաշտպանն՝ առ որ պարտիմք զիմել վաճն  
 վերկութեան յամենայն վտանգս և ի նեղութիւնս մեր .  
 զուցանէ մեզ զանձառ զօրութիւնս ԱՅ՝ որ միւսն է  
 կարող տալ մեզ զյաղթութիւնս յամենայն մարտս և ի  
 փորձութիւնս թշնամեաց մերոյ մարմնականայ և հոգե-  
 թէ՛ն՝ յիտարարէ ի կանայ : Եւ յընթեռնութիւնս զգիրս անձաշունչ մատենայ  
 զանկէն յընթեռն- նա ոչ այնքան օգուտս քաղէ անտի՛ որ կարի պատրաստ  
 մանկէ քանի՛ն աչ : Է պարտիւ ի թերթս գրոյն կամ խօսիւ զգրոյ ա-  
 ռանց նոյնն իսկ գրոյ , որքան նա՛ որ հոգւով բեւե-  
 ռեալ իցէ ի նոյն և որոյ սիրտ լցեալ իցէ շնորհօք  
 հոգւոյն սրբոյ . որ հոգւով և կենօք փոխեալ իցէ  
 միանգամայն յերկնային պատուիրանն զորս ընթեռ-  
 նա յԱճաշնչի անդ . որ ոչ իցէ անբարտաւան և բար-  
 կացող և ազահ և զանկայող աշխարհային ունայն  
 հեշտութեանց . որ յամենայն օր զիւր հին քայսխառ տ  
 մոյն կեանս թողեալ՝ արդիւնաւորի յառաքինութեան  
 արւաւել քան զարւաւել : Չհոսկն ասայից , չիք ինչ  
 որ արւաւել զանձսիրութիւնն ի միտս արմատացուցէ ,  
 Եսայի . 5 : և զանբարչտութիւնն ի մտայ արմատախիւ արասցէ :  
 Մատ . 22 : քան թէ համապազորդ ընթեռնութիւն և լսելն զպատ-  
 ւ . Կոր . 14 : գանս Աստուծոյ , եթէ հետեւորդ իցէ ընթերցմանն  
 և ունկնդրութեանն բարեմտութի և բարեյօժարութի ի  
 թէ՛ն՝ զընչ քննու ճանաչել և ի հետեւել պատուիրանայն ԱՅ : Ասան զի  
 թէ՛ն՝ անգիտութի առանց անորատ աչաց և մարտը խորհրդոյ և բարի  
 քննելն աչ : մտայ ոչինչ համարի բարի և հաճելի առաջի ԱՅ :  
 Եւ ընդ հակառակն ոչինչ այնպէս մռայլ արկանէ  
 զՔսիւ և զփառօքն Աստուծոյ , ոչինչ այնպէս զկու-  
 թութիւն մտայ և զմոլեկան ատառ հոգւոյ մտածանէ ի  
 մարդիկ , որպէս անպիտութիւն բանին Աստուծոյ :

Երկրորդ մասն Չորսին զորն գիտութեան որպէս Գրոց 2

Յառաջին մասին այսր ճառի՝ որ զսիրտս ընթերցողայն ՚ի գիտութի սուրբ գրոցն յորդորէ՝ լիովին ցուցաբ զի գիտութիւն անձաշունչ մատենիցն Տարկաւորք և օգտաւէտ է ամենայն մարդկան • որն թողցուք և զայս ՚ զի բարւոք իմանալով մեր զգիտութիւն սուրբ գրոց՝ բարւոք իմանալք և զՏարկաւոր պարտիս մեր առ Աստուած և առ մարդիկ : Արդ դարձեալ վերստին ՚ի վերայնոյն առարկայի Տալ զհին զբանս մեր տողեսցուք : Եթէ զՔս դաւանիմք մեք ՚ ընդէ՛ր սալս անգէտ գտանիցիմք ՚ի վարդապետութե նորին • քանչի տեսանեմք զի բնականապէս ամենայն ումեք ամօթ մեծ թուի անգէտ գտանիլ ՚ի գիտութեանն՝ որում ինքն Տեսելի : Արդարև զամօթի Տարկանի անձն որ կոչիլ փիլիսոփայ ՚ որ զգիրս փիլիսոփայութե ջնթեռնու • և ամօթ լինի նմա կոչիլ օրէնագէտ կամ աստեղաբաշխ և կամ բժիշկ ՚ որ շունիցի անգամ ծանօթութի գրոցն օրինաց ՚ աստղագիտութե և բժշկականութե : Այլ ուրեմն ի՛նչ հնար իցէ ումեք ասել թէ դաւանի զՔս և զկրօն նորա ՚ եթէ ոչ գուն ՚ի գործ գնիցէ և ջանայցէ՝ որքան և հնար իցէ նմա ջանալ՝ ընթերնուլ և լսել և գիտել զմատեանս Աւետարանին և վարդապետութեանն Քի : Թէպէտ և պիտանի իցեն այլ գիտութիւնք և արժանի ուսման ՚ սակայն ո՛չ որ կարէ ուրանալ զի գիտութի Աճաշունչ մատենին գեթագոյն է քան զամենայն գիտութիւնս ՚ և անցանէ զան-

Բունն այ գերտ-  
զննց է քան զս  
գիտութեանն է

չանէ զայլովք գերազանցութիւն : Սորին աշագուղի նչ  
 պատճառանս կարիցեմք պատճառել ի յեանում ա-  
 ւուր յորտարնդոստ ատենին Քի որք բերկրիմք ըն-  
 թեռնուլ և լսել զկեղծիս և զստութիւնս ի մարդ-  
 կանէ ճարտարեալս , առաւել քան զամենասուրբ Ա-  
 լետարանն յորին . շունիմք զժամանակ՝ ասեմք մեզն  
 առնել զայն , զոր յատկապէս և գեր քան զամ պարտ-  
 է մեզ առնել . և բազում անգամ ախորժիմք ըն-  
 թեռնուլ զայլ գիրս՝ զոր պարտիմք իբրև ստորնա-  
 գոյն քան զԱճաշունն ի բայ թողուլ , և առաւել  
 քան զառաւել յընթերցումն անկէն մատենիցն պա-  
 րապէլ : Սմին իրի որք դաւանիմքս զԱճ և զամ զՏա-  
 ւատ և զյոյս մեր ի նա հաստատեմք , նուիրեսցուք որ-  
 քան հնար է զանձինս մեր ծանօթուէ բանին Աստուծոյ ,  
 փութաջան պարապելով յընթերցումն և յունկնդրուի

Մնորի պատճառ-  
 անս յետո կտսե-  
 ընդ ի գիտութեանէ  
 և զանտեղի պատճառանս  
 պատճառեն առ ի կեղ-  
 ծեօք պատրուակել զայս  
 յանցաւորութիւն իւրեանց :  
 Ոմանք կամին անմեղ  
 ցուցանել զինքեանս  
 պատճառելով զպատճառս  
 բնական տկարութեան  
 և երկչոտուէ իւրեանց ,  
 ասելով թէ ջիշխեն  
 նք զսուրբ մատենանս  
 ընթեռնուլ , զի մի  
 անգիտութի իւրեանց  
 առաջնորդ լինիցի  
 ինքեանց ի սխալանս :  
 Այլք ասեն թէ կարի  
 դժուարին է հասկանալ  
 զսուրբ գիրս . և այնքան  
 մեծ է դժուարութիւն  
 իմացուածոյն մինչ  
 վարդապետաց և գիտնականաց  
 միայն է անկ լինիլ  
 պարապեալ յընթեր-  
 ցումն յորին : Այլ  
 արդ առ ի հերքել զստաջին  
 պատճառն , գիտելի է  
 զի անգիտութիւն քանին  
 Այ է պատճառ ասենայն  
 սխալանաց , ըստ որում  
 Քն ինքնին ստաց  
 Սաղուկեցոցն , թէ  
 Տղարեւել ոչ գիտէ  
 զգիրս և ոչ զպատ-  
 ճառն : Սոյա ուրեմն  
 զի արդ հնար իցէ  
 նոցա ի շարեանս  
 վախճիլ , որք տակաւին  
 ի մնայլ

Երկերէն :

Մտք .

22 : ասաց Սաղուկեցոցն , թէ  
 Տղարեւել ոչ գիտէ զգիրս  
 և ոչ զպատճառն : Սոյա  
 ուրեմն զի արդ հնար  
 իցէ նոցա ի շարեանս  
 վախճիլ , որք տակաւին  
 ի մնայլ

անգիտութեան խարխափեն : Եւ զի՛արդ Տնայր իցէ նց  
 ելանել ՚ի գբոյ խարխափանայ տգիտութեան որոյ  
 շիցէ անգամ փոյթ ընթեռնուլ կամ լսել զայն ամ  
 յորմէ կարեն գտանել զգիտութիւն : Ար կարի գի-  
 տուն է այժմ , անգէտ էր յառաջագոյն . բայց սա-  
 կայն ո՛չ ծուլայաւ նա յընթեռնուլ , երկն չելով թէ գու-  
 ցէ անկանիցի ՚ի սխալանս . այլ մտադիւրագոյնաւ և  
 փութաչան յընթերցումն պարապեցաւ , զի մի տակա-  
 ւին ՚ի վայրս տգիտութե՛ խարխափիցէ . և ՚ի տգի-  
 տութենէ ՚ի վայրս սխալանայ անկանիցի : Եւ եթէ  
 ջյուցանիցես ինչ փոյթ ՚ի գիտել զՃշմարտութի՛ Այ՛  
 որ է քեզ պիտանի և կենցաղօգուտ գիտութի՛ երկն-  
 չելով զի մի անկանիցիս ՚ի սխալանս , ապա ուրեմն նո-  
 վին պատճառաւ պարտիս դու անշարժ մնալ և ո՛չ  
 զոտնաքայլ մի փոխել , զի մի գուցէ գնալովդ զքեզ  
 ՚ի ցելս խրեալ վտանգեսցես . նովին պատճառաւ պար-  
 տիս չուտել ինչ , զի մի գուցէ փութով յափրանայ-  
 ցես . պարտիս զցորեան չսերմանել և ՚ի պաշտօնի  
 քում չաշխատիլ և զինչս քոյ ՚ի կիր չարկանել , զի  
 մի գուցէ զսերմանս քո և վխատակս քո և զմթերս ըն-  
 շիցդ կորուսանիցես . և այսորիկ աղագաւ բարեգոյն  
 լիցի քեզ ծոյլ և անգործ կեալ , և ոչ երբէք ՚ի գործ  
 ինչ պարապիլ , զի մի գուցէ չարիք ինչ անակնկալ  
 դէպ լիցին քեզ ՚ի գործառնուէ քում : Եթէ զԱստ-  
 ուածաշունչն ընթեռնուլդ երկիցես դու անկանիլ ՚ի  
 սխալանս , իսկ և իսկ ցուցից քեզ զՃանապարհ խոյս  
 տալոյ Տեռանալոյ ՚ի վտանգէ անկանելոյ ՚ի սխալանս :  
 Ընթերցի՛ր զսուրբ գիրս Տեղութեամբ , ցած և խո- Թէ զի՛որդ Բո-  
 նարհ սրտիւ և այնպիսի դիտաւորութեամբ , զի ո՛չ բեզէս և անվը-  
 զքեզ այլ զԱճ փառաւորեսցես գիտութեամբ նորին . քանզի պարտ է ա-  
 և յընթեռնուլն քո յամենայն աւուր աղօթեա՛ առ Աճ անել զո՛ր Գեղ :  
 զի յընթերցմանէ անտի զբարի պտուղս քաղեսցես . և  
 մի Տետաքըքի՛ր լինի՛ր Տասկանալ զայն , աւելի քան զոր

Թէ զի՛որդ Բո-  
 անվը-  
 ա-  
 Գեղ :

միանգամ պարզ մտօքդ հասկանալ կարես : Քանզի  
 ըստ ասելոյ սրբոյն Ազգաստինոսի , գիտուի սք գրոյ  
 է տեղի ինչ մեծագործ և լայնարձակ և բարձր • բայց  
 կարի ցած է դուռն նորին • այնպէս զի յանձնապաս-  
 տանքն և յանդգունքն չկարեն գտանել անդ զնուս •  
 բայց որ մտանելն կամիցի , պարտի զքամակն կորայու-  
 ցանել և զվիզն խոնարհեցուցանել : Յանձնապաս-  
 տանութիւն և յանդգնութիւն են մայր ամենայն սխալա-  
 նայ • և խոնարհութիւն չունի և չգայ զերկիւղ սխա-  
 լելոյ : Ասան զի խոնարհութիւն ոչ գայլ ինչ կամի բայց  
 միայն ճանաչել զճշմարտութի • զսուրբ գիրսն քննեա-  
 ցէ , և զվի բանն բերեալ միւսոյ բանին հույ դիցէ •  
 և ՚ի չկարելն զգորութիւն բանին հասկանալ , զայլը  
 աղաչեսցէ մեկնել զայն և իւրն հասկայուցանել • և  
 ոչ յանդգնաբար և անխոհեմաբար ինքն ինքեան մտա-  
 ցածին մեկնութիւնս տայէ այնմ՝ զոր ինքն հասկա-  
 նալ չկարէ : Ամին իրի խոնարհին չկայ վտանգ սխա-  
 լելոյ ՚ի քննելն իւր վւտահաբար զճշմարտութիւն բա-  
 նինն անճաշունչ մատենից • Եւ եթէ անգէտ իցէ իւր  
 միտք , նա առաւել լնթեռնուլ և քննել զսք գիրսն  
 հարկաւ փառագեսցի , զի զմիտս իւր ՚ի բայ հանցէ  
 ՚ի տգիտութեանս : Եւ ոչ այսչափ միայն , այլ և  
 անասէրն ՚ի լսելն անգամ զբանս ԱՅ , ոչ վրեպեսցի  
 յօգտիցն ունկնդրութե • բայց կրկին օգտտ կայ նորա  
 առաջի ՚ի լսելոյն և յնթեռնոյն միանգամայն : Չայս  
 սաայի զի զերկիւղն զոր եւնիցի որ ՚ի պատճառս ան-  
 գիտութեան յնթեռնուլն զսուրբ գիրս ՚ի բայ դիցէ  
 բոլորովին : Եւ զկնի այսր արժան է զդժուարութե  
 սք գրոյն խօսել և ասել • Տիւանդոտքն և տկարքն  
 ստամորսաւ չկարելով զգէր մտեղէնս ուտել զանձինս  
 քաղցր և թեթեւ կաթին սովորեցուցանեն • և ՚ի հա-  
 մարամս վայելելոյ մասնւոյս ւ պատեն միջև ոյժ ՚ի մար-  
 մինսն յատելցի և գիտութիւն ՚ի հոգիան առաւելցի :

Սուրբ Գրքին է՝  
 զի ՚ի-բեմոյ է՝  
 և է՝ զի ՚ի-բեմոյ  
 էմոյ :



Ասան զի զգիտունս և զանգէտս միասինս ընդունին ԱՃ.  
 ոչ ումեք զերեսս դարձուցանէ . զոչ ոք յաջայ հանէ .  
 այլ զամենեսեան հաւասար ակնարկեալ սիրէ : Նա ա-  
 ւանիկ և սուրբ գիրքն լի են ցածագոյն ձորովք և հա-  
 ւասար ճանապարհօք , յորս դիւրին է գնալ անաշխատ .  
 լի են նոյնգունակ բարձրաբերձ բլրովք և լեռամբք ,  
 յորոց զառ ՚ի վերս սակաւուց ոմանց է ելանել դիւ-  
 րաւ : Եւ որ միանգամ զանձն իւր սուրբ գրոց նուրի-  
 րեսցէ փութաջան վաստակովք և բորբոքեալ եռան-  
 դեամբ , անհնար է նմա ըստ ասից օրբոյ Ասկեբերա-  
 նին՝ չհասանել շնորհաց երկնային նորաստաւորուէ :  
 Ասան զի ամենակալն ԱՃ ուղարկեսցէ նմա զվարդա-  
 պետ ոմն բարեպաշտ առ ՚ի ուսուցանել նմա զճանա-  
 պարհ գիտութեան , որպէս ուղարկեաց զուսուցիչ  
 ոմն առ Եթէովպայի հզօր ներքինին՝ գանձապետն  
 Աանդակայ տիկնոջն Եթէովպայուոյ . որ փափաք մեծ  
 ունէր ընթերցման սուրբ գրոց , թէպէտ զզօրուի բա-  
 նիցն չկարէր հասկանալ . բայց տեսեալ ԱՅ զեռանդն  
 ներքինուոյն վասն բանին ճշմարտութեան՝ ուղարկեաց  
 նմա զառաքեալն իւր զՓիլիպպոս առ ՚ի սլատմել նմա  
 զիսկական զիմաստ բանիցն զոր ընթերցուոյր . և կամ  
 եթէ կարօտիցիմք առն միոյ գիտնականի առ ՚ի ուսու-  
 ցանել և լուսաւորել զմիտս մեր , ԱՃ ինքնին ՚ի վե-  
 ըուստ զլոյս ճառագայթեցէ ՚ի միտս մեր , և ու-  
 սուցէ մեզ զայն ամենայն՝ որոց անձանօթ իցեմք և որ-  
 րոց միանգամ պէտս ունիցիմք : Յայլում տեղւոջ ասէ Չեմբը կնիւր է  
 նա և նոյն ինքն անձարեալն Ասկեբերան , թէ մարդ-  
 կային խնաստութիւն և աշխարհային գիտութիւն չէն սուրբ գրոց :  
 հարկաւոր մարդոյ հասկանալ զսուրբ գիրս . այլ մե-  
 այն պիտոյ է նմա յայտնութիւն հոգւոյն սրբոյ . որ  
 զճշմարտ զօրութիւն բանից ազգէլով հեղու ՚ի միտս  
 նորա , որ խոնարհուք և անվաստակ ջանիւք զճշմար-  
 տութի երկնից ՚ի գիրսն անդ խնդրէ : Չեմբնոյն որ Մ. 7

ԱՃ զալտ Ենդրե  
 անգէտ , որ բարե  
 ճոտ կմեցի պէտն  
 նորս գեռել :

Չեմբը կնիւր է  
 սուրբ գրոց :

Ինչպէ՛ս աստուծո՛ւ , եւ որ հոյ՛սէ՛ գոմէ՛ս , եւ որ Բոլո՛սէ՛ Բոյ՛սի  
Բորի հանձն վնձնա՛ն . Եթէ միանգամ համ երկիցս եւ համ երկիցս ընթեռ  
ճանաչուց զսորքնս և զգորուին շատկանայցեմք , մի սրտաբեկ եղեալ

4 էր :

զկայ սուրբ անդանօր . այլ անդադար նկրտեսցուք  
յնթեռնուլ եւ յաղօթել եւ յայլոյ զգորուին բանիցն  
Տարցանել . եւ այսպէս անդադար զդուռն բաղխելով  
փականքն բացիին մեզ ՚ի վերջոյ . քանզի որպէս ասե  
սուրբն Ազոստինոս , Թեպէտ ե՛ի սուրբ գիրսն անդ  
բազում բանք իցեն փակեալք ՚ի խորհուրդս դժուար  
իմայս , բայց որ ինչ միանգամ խորին խորհրդովք  
ոյստամի ՚ի միում տեղւոջ , նոյնն սլարդ եւ բացայայտ  
մտօք այլ ուրեք գրեալ տեսանի . եւ այսոքիւք երկո

Այնոք որքեւլէլ  
ի գիրսն Բէ Բո  
նէն Աստուծոյ :

քումք սուրբ գիրքն լնդուանկ են մտայ ուսելոյ եւ  
անուսից : Իւ զամենայն դիւրիմայ բանն անաշունչ  
զրոյ՝ որք Տարկաւոր են փրկութեան մարդկան իւ  
րաքանչիւր ոք սլարտի բարւոք ուսանիլ եւ ՚ի յիշո  
ղութեան իւրում տալաւորել եւ յօգուտ հոգւոյ իւրոյ  
ի կիր արկանել : Եւ զի զդժուարիմայ բանիցն ասա  
ցից , սլարտի նա սակաւիկ մի անձանօթ մնալ խորհրդոյ  
նց , մինչև բարեբարն հաճեսցի զգաղտնիան յայտնել  
մտայ նորա . նա աւանիկ եթէ վրէպ իցէ ոք ՚ի սրա  
մտութեան համ ՚ի ձեռնհասութի՛ն Աժ վասն այսր ոչ  
նմա զանմտութեան մեղ ինչ դիցէ . բայց սակայն ձեռն  
հասքն եւ սրամիտքն ոչ սլարտին անհիյթ մնալ զըն  
թելցանէ սուրբ գրոյ , վասն զի այլք չեն նոյնգունակ  
ձեռնհասք եւ սրամիտք յնթեռնուլ . եւ ՚ի վերայ այսր  
ամենայնի՛ վասն դժուարիմայ լինելոյ տնայ բանից՝  
չէ սլարտ ունք զբովանդակ մատենիւքն զանց առնել :

Թե՛ս յո՛ւս աստուծո՛ւ  
հոմիէն զսրտաբեկ  
որ ինչոսով եւ ուն :


Չհուսկն ասացից , ըս վկայելոյ սրբոյն Ազոստինոսի ,  
սուրբ գրովքն ամենայն մարդիկ յուշղուի փոխեսցին .  
տկարքն եւ նիազքն զօրասցին . աւժեղքն եւ հզօրքն  
միտթարեսցին : Իւ այսպէս արդարեւ ոչ ոք ներհակ  
զանձն ցուցցէ ընթելցման բանին Այ , բայց որ միանգամ

ի խաւար անգիտուն խարխախեալ ջհարիցէ տեսանել  
 զՏոգեչահ գիտութիւն նորին . կամ որ միանգամ  
 այնպէս Տիւանդոտ իցէ , մինչ ապաքինիչ շահատու  
 զեղոցն ասելուի ցուցցէ . կամ որ միանգամ այնպէս  
 անաստուած և ամբարիշտ իցէ , մինչ ցանկասցի տեսա  
 նել զմարդիկ տակաւին խարխախեալ ի կուրուէ և  
 յանգիտութեան բանին ԱՄ :

Այսպէս խօսեցաք մեք սակաւութիւն զօր-  
 տից և զպիտանութեանց բանին ԱՄ . որ է մե ի պատ-  
 տական և ի գերագոյն բարեացն ԱՄ , զոր ետ և յայտ-  
 նեաց ազգի մարդկան յաշխարհի . եկայք ի միասին  
 գոհասցնէք զԱՄ վասն այսր մեծի և յատկական պար-  
 գեաց իւրոց և կենսառիթ չորհայ և հայրախնամ  
 տեսչութի . խնդասցնէք և բերկրեսցնէք զի յերկնաւոր  
 Տօրէն մերմէ ընկալաք զայս պարգև պատուական և  
 չնաշխարհիկ . ընթերցցնէք և լուսնցնէք և խնայցնէք  
 զայստսիկ սուրբ կանոնս և զպատուիրանս և զօրէնս  
 բրիտանէական կրօնին մերոյ . զի սոյն օրինօքն զԱՄ  
 դաւանեցաք ի մերում մկրտութեան . երկիրդիւ և  
 ակնածութեամբ գանձեսցնէք ի տուխ սրտից մերոց  
 զայստսիկ կենցաղօգուտ և պտղալից խրատս . զտիւ  
 և զգիշեր զԱՄ խորհեսցնէք և զանայնոցն խոկասցնէք  
 և յերկնայինն յարեացնէք . քան թ մտի քննեսցնէք  
 զբանս Տն . և իբր թէ որո՞՞՞ որո՞՞՞նայնէք , զի գտցուք  
 զբողբոհ Տիւթ և զՏոգեկան օգուտ և զուղեղ և զմեղք  
 և զմիջուկ պտղոցն և զբողբոհուի և զտիրականս և ըզ-  
 միսիթարուի : Խաղաղուք և հանդարտութիւն և անգոր-  
 ռութեւ և ճշմարտութիւն զխիղճ մտաց մերոց սրբեսցնէք .  
 և զմիտս մեր հաստատութեամբ և անսխալ ստուգութեւ  
 անձային բանիցն ամբարիշտ արասցնէք : Աղօթեսցնէք առ  
 ԱՄ միայնակ հեղինակն այսոցիկ երկնային գիտունեց  
 զի իցի մեզ խօսիլ և խորհիլ և հաւատալ և կեալ և  
 ելանել աստի համեմատ ողջամիտ վարդապետութեւ և

ՍԷ գերէն է մե 'ե  
 գերագոյն բար-  
 եացն ԱՄ :

Ռոզիւ ընկեր-  
 ցութիւն , գործու-  
 ծութիւն և ողորմ-  
 էրք գննութիւն  
 գրոց :  
 Սոյն .



ստուգուէց բանիցն անայնոց : Եւ այսուիկ կարեմք ու-  
 նիլ յաշխարհի աստ զպաշտպանութի և զընորհս և  
 զխնամն Այ , միանգամայն և զանճառելի միսիթարուի  
 խաշարուէ և անդորրութեան խղճի մտայ . և յետ  
 այսր թշուառ և աղցաւոր կենայ լիցի մեզ վայելել  
 զանվախճան երանութի և զփառս երկնից . զոր պար-  
 գեւսցէ մեզ որ մեռաւ վասն մեր Յս Բս , որում  
 լնդ նմին և Հօր և Հոգւոյն Սրբոյ եղիցի ամ փառք  
 և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս :









